ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-164-14.02.2022-ԱՍ-011/0) ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-164[1]-14.02.2022-ԱՍ-011/0) ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ Կ-164-14.02.2022-ԱՍ-011/0				
1.	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով» բառերը փոխարինել «կենսաթոշակային ապահովության բնագավառում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր)» բառերով:	Ընդունվել է, նախագիծը լրամշակել է, որի հետևանքով նախագծի մյուս հոդվածների համարակալումը փոխվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ մասով . «2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված են սույն օրենքով սահմանվածից տարբեր նորմեր, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3	ՀՀ կառավարություն	**7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի 12-րդ հոդվածում լրացվող 4-րդ մասը «իրավունք ունեցող» բառերից հետո լրացնել «(շահառու հանդիսացող)» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

4.	ՀՀ կառավարություն	**10-րդ հոդված**	Նախագծի 10-րդ հոդվածով Օրենքի 20-րդ հոդվածում լրացվող 4-րդ մասը «իրավունք ունեցող» բառերից հետո լրացնել «(շահառու հանդիսացող)» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	**13-րդ հոդված**	Նախագծի 13-րդ հոդվածով առաջարկվում է՝ Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում «9-րդ հոդվածի 2-րդ» բառերը փոխարինել «9-րդ հոդվածի 1-ին» բառերով. ,	Ընդունվել է:	Ընդունվել է:
6	ՀՀ կառավարություն	**14-րդ հոդված**	Նախագծի 14-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասում «Աշխատանքային ստաժը» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի մասնակից (անդամ) պետության տարածքում ձեռքբերված ստաժը,» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7	ՀՀ կառավարություն	**Նոր 15-րդ հոդված**	Առաջարկվում է Օրենքի 33-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1-րդ մասով. «9.1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգը սահմանում է Կառավարությունը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
8	ՀՀ կառավարություն	**Նոր 17-րդ հոդված**	Առաջարկվում է Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15-րդ մասով. «15. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի շրջանակում կենսաթոշակի վճարման	Ընդունվել է:	Ընդունվել է:

			առանձնահատկությունները սահմանում է Կառավարությունը:»		
9	ՀՀ կառավարություն	**Նոր 18-րդ հոդված**	Առաջարկվում է Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասը «ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու» բառերից հետո լրացնել «կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
10.	ՀՀ կառավարություն	**20-րդ հոդված**	Նախագծի 20-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 41-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասում՝ ա) 9-րդ կետը «դեպքում» բառից հետո լրացնել «, եթե այդ միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ» բառերով, բ) 11-րդ կետը «կենսաթոշակի գործերն ուղարկելու դեպքում» բառերից հետո լրացնել «, եթե այդ միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ» բառերով, 2) 3.3-րդ մասը «ստացված կենսաթոշակի գործի» բառերից հետո լրացնել «դիմումի» բառով, իսկ «հիման վրա կենսաթոշակ նշանակելիս» բառերից հետո լրացնել «կենսաթոշակի իրավունքը չի վերանայվում, իսկ կենսաթոշակի» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
11.	ՀՀ կառավարություն	**21-րդ հոդված**	Նախագծի 21-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքը 43-րդ հոդվածի՝ 1) 5-րդ մասը «կարող են հետ գանձվել, եթե» բառերից հետո լրացնել «կենսաթոշակը սխալմամբ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			(Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) վճարելը հայտնաբերելու ամսվան հաջորդող 1 տարվա (12 ամսվա) ընթացքում անձը ներկայացնում է ավել վճարված կենսաթոշակի գումարը վերադարձնելու մասին գրավոր դիմում (համաձայնություն)» բառերով, 2) 7-րդ մասում «օրվան» բառը փոխարինել «ամսվան» բառով :		
12.	ՀՀ կառավարություն	**22-րդ հոդված**	Նախագծի 22-րդ հոդվածով Օրենքի 55-րդ հոդվածում լրացվող նոր՝ 13-րդ մասում «ապրիլ» բառը փոխարինել «մայիս» բառով:.	Ընդունվել է:	Ընդունվել է:
13.	ՀՀ կառավարություն	**Նոր 23-րդ հոդված**	Առաջարկվում է Օրենքի հավելված 1-ի՝ 1) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7. Սույն հավելվածով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակային վճարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է վճարվում (փոխանցվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված միասնական հաշվին) աշխատավարձի հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Կենսաթոշակային վճարը սահմանված ժամկետում չվճարելու կամ սահմանված ժամկետներից ուշացնելու, կամ միջազգային կազմակերպությունների վարձու աշխատողների համար անձնավորված հաշվարկը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու կամ չներկայացնելու համար տույժեր և տուգանքներ չեն հաշվարկվում: Կենսաթոշակային վճարը Հայաստանի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Հանրապետության պետական բյուջե վճարման պահ է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական գանձապետական հաշվին մուտքագրման օրը:»: 12-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 13-րդ կետով. «13. Միջազգային կազմակերպության վարձու աշխատողների համար գրանցման հայտերը և անձնավորված հաշվարկները ներկայացնելու (այդ թվում՝ դրանցում տվյալները լրացնելու) առանձնահատկությունները և ժամկետները սահմանում է Կառավարությունը:»:		
«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ Կ-**164**[1]-14.02.2022-ԱՍ-011/0					
1.	ՀՀ կառավարություն	**1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 30-րդ հոդվածում լրացվող 3-րդ մասում «իրավունք ունեցող» բառերից հետո լրացնել «(շահառու հանդիսացող)» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	ՀՀ կառավարություն	**6-րդ հոդված**	Նախագծի 6-րդ հոդվածով Օրենքի39-րդ հոդվածում լրացվող նոր՝ 13-րդ մասում «ապրիլ» բառը փոխարինել «մայիս» բառով:	Ընդունվել է	